ՆԱԽԱԳԻԾ
(լրամշակված տարբերակ)

Կ-055-07.07.2017-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ԲՈՒՅՍԵՐԻ ՍՈՐՏԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է բույսերի սորտերի ստեղծման, օգտագործման, պահպանության, բուծողի իրավունքի արտոնագրի տրամադրման կամ այդ իրավունքի դադարեցման հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները

1) Բուծող՝

ա. անձ, ով ստեղծել, բացահայտել կամ կատարելագործել է որևէ սորտ,

բ. անձ, որը հանդիսանում է սորտը ստեղծողի, բացահայտողի կամ կատարելագործողի գործատուն կամ վերջինիս հանձնարարել է տվյալ աշխատանքը, եթե այլ բան նախատեսված չէ նրանց միջև կնքված աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրով,

գ. անձ, որը հանդիսանում է սույն հոդվածի ա. կամ բ. կետերում նշված անձանց իրավահաջորդը.

2) Բուծողի իրավունք՝ սույն օրենքով սահմանված բուծողի իրավունքը, որը հավաստվում է բուծողին տրամադրված արտոնագրով,

3) Սորտ՝ բուսաբանական հայտնի տաքսոնների ամենացածր դասի բույսերի նույն տաքսոնի խումբ, որն անկախ բուծողին իրավունքներ տալու հանգամանքից կարող է՝

ա. որոշվել՝ տվյալ գենոտիպի կամ գենոտիպերի համակցությունը բնութագրող հատկանիշների արտահայտման աստիճանով,

բ. տարբերվել բույսերի ցանկացած այլ խմբից առնվազն մեկ տարբերակիչ հատկանիշով,

գ. դիտարկվել որպես մեկ ամբողջություն՝ անփոփոխ վերարտադրության պիտանիության տեսանկյունից,

4) Լիազոր մարմին՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն:

5) «ՈՒՊՈՎ (UPOV)»՝ (այսուհետ՝ ՈՒՊՈՎ) Բույսերի Նոր Սորտերի Պաշտպանության Միջազգային Միություն, որը հիմնվել է 1972 թվականին Բույսերի Նոր Սորտերի Պաշտպանության Միջազգային Կոնվենցիայի կողմից և հետագայում վերանայվել է 1972 թվականի, 1978 թվականի և 1991 թվականի ակտերով:

6) ՈՒՊՈՎ-ի անդամ՝ 1961 թվականի ՈՒՊՈՎ?ի կոնվենցիայի 1972 թվականի կամ 1978 թվականի Ակտերի անդամ պետություն կամ 1991 թվականի Ակտի պայմանագրային կողմ հանդիսացող պետություն:

7) սերմանյութ (տնկանյութ)՝ սորտի վերարտադրության նպատակով օգտագործվող բույս կամ դրա առանձին մաս.

8) բուսանյութ՝ սորտի վերարտադրությունից բացի այլ նպատակով օգտագործվող բույս կամ դրա մաս.

9) քաղաքացիներ՝ ՈՒՊՈՎ-ի անդամ պետության քաղաքացի, կամ ՈՒՊՈՎ-ի անդամ միջպետական կազմակերպության անդամ պետության քաղաքացի:

Հոդված 3. *Օրենքի կիրառման ոլորտը*

1. Սույն օրենքը կարգավորում է բույսերի բոլոր տեսակների և սորտերի պահպանման և օգտագործման գործընթացում ծագած հարաբերությունները:

2. Սույն օրենքի դրույթները հավասարազոր տարածվում են ինչպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, այնպես էլ ՈՒՊՈՎ-ի անդամ պետության քաղաքացիների, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վրա, որոնք բնակվում կամ գործում են ՈՒՊՈՎ-ի անդամ պետությունում:

ԳԼՈՒԽ II

ԲՈՒՅՍԵՐԻ ՍՈՐՏԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Հոդված 4. Բույսերի սորտերի իրավական պահպանության տրամադրման պայմանները

1. Բուծողի իրավունք տրամադրվում է սորտի այդ իրավունքի տրամադրման չափանիշներին բավարարելու դեպքում.

Բուծողի իրավունքը տրամադրվում է այն դեպքում, եթե սորտը՝

1) նոր է,

2) ունի տարբերակիչ հատկանիշ,

3) միատարր է,

4) կայուն է:

2. Բուծողին իրավունքի տրամադրումը չի կարող կախված լինել լրացուցիչ պայմաններից կամ տարբերվել սույն հոդվածի 1) մասում թվարկված չափանիշներից, եթե սորտը անվանված է սույն օրենքի 20-րդ հոդվածի դրույթներին համապատասխան անվանումով և հայտատուի կողմից պահպանվել են սույն օրենքով նախատեսված ընթացակարգերը և կատարվել են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված? պետական տուրքերի վճարումները:

Հոդված 5. Նորություն՝

1. Սորտը համարվում է նոր, եթե բուծողի իրավունքների համար հայտի տրման օրը բուծողի կողմից կամ նրա համաձայնությամբ սորտի սերմանյութը (տնկանյութը) կամ բուսանյութը օգտագործման նպատակով չեն վաճառվել կամ այլ ճանապարհով չեն տրամադրվել այլ անձանց ՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում՝ հայտի ներկայացման օրվանից ոչ պակաս, քան մեկ տարի առաջ,

2) այլ պետության տարածքում՝ հայտի ներկայացման օրվանից ոչ պակաս, քան չորս տարի առաջ, պտղատու ծառատեսակների և խաղողի համար՝ ոչ պակաս քան վեց տարի առաջ:

Հոդված 6. Տարբերակիչ հատկանիշ

1. Սորտը համարվում է տարբերակիչ հատկանիշ ունեցող, եթե այն հստակ տարբերվում է ցանկացած այլ սորտից, որի գոյությունը հանրահայտ է հայտի ներկայացման պահին: Մասնավորապես՝ բուծողի իրավունքների տրամադրման կամ սորտերի պաշտոնական գրանցամատյանում այլ սորտի գրանցման համար հայտի ներկայացումը յուրաքանչյուր երկրում սորտը դարձնում է հայտնի՝ հայտի լրացման պահից սկսած, եթե տվյալ հայտի լրացման հետևանքով բուծողին տրվել է իրավունք կամ նշված սորտը ներառվել է սորտերի պաշտոնական գրանցամատյանում:

Հոդված 7. Միատարրություն

1. Սորտը համարվում է միատարր, եթե այն (տարբերակիչ հատկանիշները կարող են բացահայտվել դրա բազմացման (վերարտադրման) ընթացքում), իր հիմնական հատկանիշներով բավական միատարր է:

Հոդված 8. Կայունություն

1. Սորտը համարվում է կայուն, եթե դրա հիմնական հատկանիշները մնում են անփոփոխ մի քանի բազմացումից (վերարտադրումից) հետո կամ բազմացման հատուկ բոլորաշրջանի դեպքում ՝ յուրաքանչյուր բոլորաշրջանից հետո:

ԳԼՈՒԽ III

ԲՈՒԾՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՅՏԸ

Հոդված 9. Հայտի ներկայացումը

1. Բուծողի իրավունքի ստացման համար հայտի ներկայացման օր է համարվում լիազոր մարմնի կողմից հայտի ստացման օրը:

2. Հայտը պետք է պարունակի՝
1) Դիմում
2) Սորտի անուն
3) Սորտի նկարագրություն
4) Սահմանված չափով պետական տուրքի վճարման անդորրագիր:

3. Հայտի փաստաթղթերի ձևերի նկատմամբ պահանջները սահմանում է լիազոր մարմինը:

4. Յուրաքանչյուր սորտի համար լրացվում է նոր հայտ:

Հոդված 10. Առաջնության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք, ով ՈՒՊՈՎ-ի անդամ պետություններից մեկում, ներկայացրել է բույսի նոր սորտի պահպանման իրավունքի տրամադրման հայտ, 12 ամսվա ընթացքում օգտվում է տվյալ սորտի համար լիազոր մարմնի կողմից բուծողին իրավունքների տրման առաջնության իրավունքից: Այդ ժամկետը հաշվարկվում է առաջին հայտի լրացման պահից սկսած:

Հայտի լրացման օրը չի հաշվարկվում սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետի մեջ:

2. Առաջնության իրավունքից օգտվելու համար բուծողը լիազոր մարմնին ներկայացրած հայտում պետք է ներառի տեղեկատվություն առաջին հայտի առաջնության մասին: Հայտատուն պարտավոր է հայտի լրացման օրվանից՝ 3 ամսվա ընթացքում, ներկայացնել առաջին հայտի փաստաթղթերի կրկնօրինակները՝ վավերացված առաջին հայտը ներկայացրած լիազոր մարմնի կողմից, ինչպես նաև օրինակներ կամ այլ ապացույցներ երկու հայտերի առարկա հանդիսացող սորտի նույնը լինելու մասին:

3. Սույն հոդվածի 1-ին մասում սահմանված ժամկետում նոր հայտի ներկայացումը կամ սորտի հրապարակումն ու տարածումը չի կարող այն մերժելու հիմք հանդիսանալ, ինչպես նաև չի կարող հիմք հանդիսանալ երրորդ անձի իրավունքների առաջացման համար:

Հոդված 11. Բուծողի իրավունքի տրամադրումը

1. Բուծողի իրավունքի տրման կամ մերժման մասին որոշումը կայացվում է սույն օրենքի 4-8-րդ հոդվածներով նախատեսված Բույսերի նոր սորտերի իրավական պահպանության պահանջներին համապատասխանության փորձաքննության անցկացումից հետո 1 ամսյա ժամկետում: Փորձաքննության ընթացքում լիազոր մարմինը կարող է աճեցնել սորտը կամ անցկացնել անհրաժեշտ փորձարկումներ, պահանջել աճեցնել սորտը կամ անցկացնել անհրաժեշտ այլ փորձարկումներ կամ հաշվի առնել արդեն անցկացված փորձարկումների արդյունքները:

2. Լիազոր մարմինը փորձարկումների և փորձաքննությունների անցկացման նպատակով կարող է պահանջել բուծողից ներկայացնել սույն օրենքից բխող անհրաժեշտ տեղեկատվություն, փաստաթղթեր կամ նյութեր:

3. Լիազոր մարմնի կողմից բուծողի իրավունքների տրամադրումը չի կարող մերժվել կամ այդ իրավունքը դադարեցվել՝ նախկինում սորտին պահպանություն չտրամադրվելու, պահպանությունը մերժելու կամ այլ պետությունում ու միջազգային կազմակերպությունում դրա ժամկետը լրացած լինելու պատճառով:

Հոդված 12. Ժամանակավոր պահպանությունը

1. Բուծողի շահերի պաշտպանության նպատակով՝ բուծողին իրավունքների ժամանակավոր պահպանություն է տրվում՝ սկսած բուծողի իրավունքների տրամադրման հայտի ներկայացման պահից մինչև բուծողի իրավունքի տրամադրումը:

2. Ժամանակավոր պահպանությունը ենթադրում է այն բոլոր իրավունքները, որոնք տրվում են բուծողի իրավունք ստանալու դեպքում:

ԳԼՈՒԽ IV

ԲՈՒԾՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 13. Բուծողի բացառիկ իրավունքները

1. Բացառությամբ սույն օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված դեպքերի՝ պահպանվող սորտի սերմանյութի կամ բուսանյութի հետ կապված սույն հոդվածում նշված գործողությունների համար պահանջվում է բուծողի՝ լիազոր մարմնում գրանցված՝ լիցենզիոն պայմանագրով ամրագրված, թույլտվությունը՝

1) արտադրություն կամ վերարտադրություն (բազմացում),

2) վերարտադրության (բազմացման) նպատակով օգտագործման համար կարգաբերում,

3) վաճառքի առաջարկ,

4) վաճառք կամ այլ ճանապարհով շուկայահանում,

5) արտահանում,

6) ներկրում,

7) պահպանություն՝ սույն հոդվածի 1-ին մասի 1) և 2) կետերում նշված նպատակներով:

2. Լիցենզիոն պայմանագրով ամրագրված թույլտվությունը բուծողը կարող է տրամադրել առաջադրելով որոշակի պահանջներ և սահմանափակումներ:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-7-րդ կետերում նշված գործողությունների՝ ներառյալ ամբողջական բույսերի և դրանց մասերի համար, որոնք ստացվել են պահպանվող սորտի բուսանյութի չթույլատրված օգտագործման հետևանքով, բուծողի թույլատվության առկայությունը պարտադիր է, բացառությամբ այն դեպքերի, երբ բուծողը հնարավորություն չի ունեցել օգտվելու տվյալ բուսանյութի նկատմամբ իր իրավունքից:

4. Սույն հոդվածի 1-4-րդ մասերի դրույթները տարածվում են նաև այն սորտերի վրա՝

1) որոնք էականորեն ժառանգել են պահպանված սորտի հատկանիշները, եթե պահպանված սորտը ինքը չի հանդիսանում այլ սորտի էական հատկանիշների ժառանգորդ,

2) որոնք հստակ չեն տարբերվում պահպանված սորտից՝ համաձայն սույն օրենքի 7-րդ հոդվածի դրույթների.

3) որոնց արտադրությունը պահանջում է պահպանվող սորտի բազմակի կիրառում:

5. Սորտը համարվում է մեկ այլ սորտից ըստ էության ստացված. եթե այն՝

1) ստացվել է նախնական սորտից կամ այլ սորտից և վերջինս ինքնին ստացվել է նախնական սորտից, միաժամանակ պահպանելով նախնական սորտի արտահայտման հիմնական բնութագիրը, որը համարվում է նախնական սորտի գենոտիպի կամ գենոտիպերի համակցում,

2) հստակ տարբերվում է նախնական սորտից,

3) համապատասխանում է նախնական սորտին՝ հիմնական հատկանիշների արտահայման տեսանկյունից, որոնք համարվում են նախնական սորտի ստացված գենոտիպերի կամ գենոտիպերի համակցման արդյունք, բացառությամբ ծագման հետևանքով առաջացած տարբերությունների:

6. Սորտերը կարող են ստացվել բնական կամ ինդուցիացված մուտանտների կամ ինքնակլոնային տարբերակով, ընտրությամբ, կամ նախնական սորտի բույսերի ընտրությամբ, հետադարձ տրամախաչման կամ գենային ինժեներիայի վերափոխման մեթոդով:

Հոդված 14. Բուծողի իրավունքի շրջանակները

1. Բուծողի իրավունքները չեն տարածվում՝

1) անձնական և ոչ առևտրային նպատակներով կատարված գործողությունների վրա,

2) փորձարարական նպատակներով կատարված գործողությունների վրա,

3) այլ սորտերի ստեղծման նպատակով կատարված գործողությունների, ինչպես նաև 13-րդ հոդված 1-4-րդ մասերով նախատեսված գործողությունների վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 13-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները նմանատիպ նոր սորտերի նկատմամբ:

Հոդված 15. Բուծողի իրավունքների շրջանակների սպառումը

1. Բուծողի իրավունքները չեն տարածվում սույն օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված սորտերի, կամ այն սորտերի վրա, որոնք բուծողի կողմից, կամ նրա համաձայնությամբ վաճառվել կամ այլ ճանապարհով շուկայահանվել են Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ սույն կետում նշված սորտից ստացված ցանկացած նյութի վրա, եթե այդ գործողությունները կապված չեն՝

1) տվյալ սորտի հետագա բազմացման հետ.

2) նյութի արտահանման հետ, որը թույլ է տալիս սորտի բազմացումն այն երկրում, որտեղ տվյալ բուսաբանական տեսակի կամ տիպի սորտերը չեն պահպանվում, բացառությամբ՝ վերջնական օգտագործման նպատակով արտահանումներից:

2. Սույն հոդվածում սորտի նկատմամբ կիրառվող «նյութ» հասկացությունը նշանակում է՝

1) ցանկացած տիպի սերմանյութ,

2) բուսանյութ, ներառյալ ամբողջական բույսերը և բույսերի մասերը,

3) ցանկացած արտադրանք, որն ստացվել է անմիջապես բուսանյութից:

Հոդված 16. Բուծողի իրավունքի սահմանափակումները

Բացի սույն օրենքով սահմանված դեպքերի՝ բուծողի իրավունքը կարող է սահմանափակվել միայն բացառիկ? գերակա հանրային շահերի դեպքերում, հասարակության և պետության կարիքների համար, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով? նախնական համարժեք փոխհատուցմամբ:

Հոդված 17. Առևտրային գործունեությունը կարգավորող մջոցառումները

1. Բուծողի իրավունքը պայմանավորված չէ սերմանյութի, տնկանյութի կամ բազմացման համար նախատեսված այլ նյութերի արտադրությունը, հավաստագրումը և շուկայահանությունը կամ այդ նյութերի ներկրումն ու արտահանումը կարգավորող որևէ միջոցից: Ցանկացած դեպքում այդ միջոցները չեն ազդում սույն օրենքի դրույթների կիրառման վրա:

Հոդված 18. Բուծողի իրավունքի գործողության ժամկետը

1. Բուծողի իրավունքը տրվում է բուծողին իրավունք տալու օրվանից՝ 20 տարի ժամկետով: Պտղատու ծառերի և խաղողի համար՝ ժամկետը կազմում է 25 տարի:

2. Բուծողի իրավունք տրամադրելու օր է համարվում հայտի ներկայացման օրը:

ԳԼՈՒԽ V

ՍՈՐՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Հոդված 19. Սորտի անվանումը և անվան օգտագործումը

1. Ցանկացած սորտ պետք է ունենա անվանում, որը պետք է ապահովի նրա նույնականացումը: Սույն հոդվածի 4?րդ կետով սահմանված դրույթը, չի կարող խոչընդոտել այդ անվանման ազատ օգտագործմանը՝ նույնիսկ բուծողի իրավունքի գործողության ժամկետը լրանալուց հետո:

2. Անվանումը չի կարող կազմված լինել թվերից, բացառությամբ այն դեպքերի, երբ այն համապատասխանում է սորտի անվանակոչման հաստատված գործելակերպին: Այն չպետք է տարակուսանք կամ շփոթմունք առաջացնի տվյալ սորտի հատկանիշների, որակի կամ ինքնության կամ բուծողի ինքնության առնչությամբ: Այն պետք է տարբերվի ցանկացած այլ անվանումից, որով ՈՒՊՈՎ-ի որևէ անդամ-պետության տարածքում անվանվել է գոյություն ունեցող նույն կամ նույն տեսակին պատկանող բուսատեսակի սորտը:

3. Սորտի անվանումը լիազոր մարմնին առաջարկվում է բուծողի կողմից: Եթե պարզվում է, որ այդ անվանումը չի բավարարում սույն հոդվածի 2-րդ կետի պահանջները, ապա լիազոր մարմինը մերժում է դրա գրանցումը և պահանջում, որ բուծողը սահմանված ժամանակահատվածում առաջարկի այլ անվանում: Սորտի անվանումը գրանցվում է լիազոր մարմնի կողմից բուծողի իրավունքների տրման հետ միաժամանակ:

4. Եթե նախկինում երրորդ անձի կողմից անվան նկատմամբ ձեռք են բերվել իրավունքներ, ապա այդ անվանումը չի գրանցվում: Եթե նախկինում ձեռք բերված իրավունքի պատճառով՝ համաձայն սույն հոդվածի 7-րդ կետի դրույթների, սորտի անվանման գործածումը արգելվում է, լիազոր մարմինը պահանջում է բուծողին ներկայացնել սորտի համար այլ անվանում:

5. ՈՒՊՈՎ-ի բոլոր անդամ-պետություններում սորտը պետք է առաջարկվի միևնույն անվանմամբ: Լիազոր մարմինը գրանցում է սույն հոդվածի դրույթներին համապատասխան առաջարկված անվանումը, եթե այն անընդունելի չի համարվում: Անվանման անընդունելի համարվելու դեպքում լիազոր մարմինը բուծողից պահանջում է առաջարկել այլ անվանում:

6. Լիազոր մարմինը ՈՒՊՈՎ-ի անդամ բոլոր իրավասու մարմիններին՝ ՈՒՊՈՎ-ի կանոնադրությամբ հաստատված կարգով, ապահովում է սորտերի անվանման, մասնավորապես՝ անվանման առաջարկման, գրանցման և չեղյալ համարելու վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը:

7. Յուրաքանչյուր ՈՒՊՈՎ-ի անդամ իրավասու մարմին կարող է լիազոր մարմնին ներկայացնել սորտի անվանման գրանցման վերաբերյալ իր դիտողությունները:

8. Յուրաքանչյուր ոք, ով Հայաստանի Հանրապետության կամ ՈՒՊՈՎ-ի անդամ պետության տարածքում վաճառքի կամ շուկայահանման համար առաջարկում է պահպանվող սորտի սերմանյութ, պարտավոր է օգտագործել այդ սորտի անվանումը, անգամ այդ սորտի վրա բուծողի իրավունքների ժամկետի ավարտից հետո՝ բացառությամբ այն դեպքերի, երբ սույն հոդվածի 4-րդ մասի դրույթներին համապատասխան նախկինում ձեռք բերված իրավունքները չեն խոչընդոտում սորտի անվանման օգտագործմանը:

9. Սորտը վաճառքի կամ շուկայահանման առաջարկելու դեպքում, սորտի գրանցված անվանումը թույլատրվում է օգտագործել ապրանքային նշանի, ֆիրմային անվանման կամ այլ նշապատկերների հետ զուգահեռ: Այդպիսի զուգակցման դեպքում սորտի անվանումը պետք է լինի հեշտ ճանաչելի:

ԳԼՈՒԽ VI

ԲՈՒԾՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Հոդված 20. Բուծողի իրավունքի անվավեր ճանաչելը

1. Բուծողի իրավունքը՝ դատական կարգով անվավեր է ճանաչվում, եթե՝

1) բուծողի իրավունքը տրվել է սույն օրենքի 5-րդ կամ 6-րդ հոդվածների դրույթների խախտմամբ.

2) բուծողի իրավունքը տրվել է բուծողի կողմից ներկայացված տեղեկատվության և փաստաթղթերի հիման վրա՝ առանց սույն օրենքի 7-րդ կամ 8-րդ հոդվածների դրույթներով սահմանված պահանջների պահպանման.

3) բուծողի իրավունքը տրվել է այդ իրավունքը չունեցող անձին, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ իրավունքը բուծողի կողմից փոխանցվել է այլ անձի:

2. Բացի սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված դեպքերի՝ բուծողի իրավունքը չի կարող անվավեր ճանաչվել:

Հոդված 21. Բուծողի իրավունքի դադարեցումը

1. Բուծողի իրավունքը կարող է դադարեցվել եթե՝

1) հաստատվի, որ սույն օրենքի 7-րդ կամ 8-րդ հոդվածներով սահմանված պահանջները չեն կատարվում:

2) համապատասխան հարցման արդյունքում և նշանակված ժամկետում՝

ա. բուծողը հնարավորություն չունի լիազոր մարմին ներկայացրել տեղեկատվություն, փաստաթղթեր կամ նյութեր, որոնք անհրաժեշտ են սորտի ստուգման և պահպանման համար,

բ. բուծողը չի առաջարկել այլ անվանում և սորտի անվանումը դադարեցվել է բուծողի իրավունք տալուց հետո:

2. Բացի սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված դեպքերի բուծողի իրավունքը չի կարող դադարեցվել:

ԳԼՈՒԽ VII

ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 22. Պատասխանատվությունը սույն օրենքը խախտելու դեպքում

Սույն օրենքի պահանջների խախտումը հանգեցնում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված քաղաքացիաիրավական պատասխանատվության:

Հոդված 23. Պաշտոնական տեղեկությունների հրապարակումը

2. Հասարակության տեղեկացվածությունն ապահովվում է լիազոր մարմնի կողմից՝

1) բուծողի իրավունքի տրամադրման համար ներկայացված հայտի և իրավունքի տրման վերաբերյալ տեղեկատվության հրապարակման միջոցով.

2) առաջարկված և հավանության արժանացած սորտի անվանումների հրապարակման միջոցով:

Հոդված 24. Բույսերի սորտերի պահպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է՝

1) Բուծողի իրավունքի տրամադրման, նոր սորտի համար առաջարկվող անվան փորձաքննության կարգը և փորձարկումների նպատակով ներկայացվող անհրաժեշտ տեղեկատվության, փաստաթղթերի կամ նյութերի ցանկը,

2) Բուծողի իրավունքի տրամադրման համար ներկայացված հայտի և իրավունքի տրման վերաբերյալ տեղեկատվության, առաջարկված և հավանության արժանացած սորտի անվանումների հրապարակման կարգը,

3) Բուծողի իրավունքի տրամադրման բողոքարկման կարգը,

4) Բուծողի իրավունք ունեցող անձանց գրանցամատյանի վարման կարգը,

5) Բուծողի իրավունքի անվավեր ճանաչելու ընթացակարգը:

ԳԼՈՒԽ VIII

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 25. Նախկինում ստացված արտոնագրերը

Մինչև սյուն օրենքի ուժի մեջ մտնելը «Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն բուսաբուծությունում սելեկցիոն նվաճումների արտոնագիր ստացած անձանց իրավունքները սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո շարունակում են պահպանվել սույն օրենքով սահմանված կարգով:

Հոդված 26. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԲՈՒՅՍԵՐԻ ՍՈՐՏԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՎԱՐԴԵՎԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 1-ին հոդված:	Նախագծի հոդված 1-ից առաջ ավելացնել. «Գլուխ I Ընդհանուր դրույթներ» տողը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 1-ին հոդված:	Հոդվածի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ. «Օրենքի կարգավորման առարկան»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 1-ին հոդված:	Հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «Սույն օրենքը կարգավորում է բույսերի սորտերի ստեղծման, օգտագործման, պահպանության, բուծողի իրավունքի արտոնագրի տրման կամ այդ իրավունքի դադարեցման հետ կապված հարաբերությունները»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
4	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 2-րդ հոդված:	Հոդվածի անվանումը շարադրել նոր խմբագրությամբ. «Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
5	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մաս:	Մասը շարադրել նոր խմբագրությամբ. «1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

6	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:	Կետ շարադրել նոր խմբագրությամբ. «Բուծողի իրավունքի արտոնագիր' փաստաթուղթ, որը հավաստում է սույն օրենքով սահմանված բուծողի իրավունքը»:	Ընդունվել է: Առաջարկությունն իրացվել է:	Ընդունվել է:
7	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի ա ենթակետ:	Ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ. «որոշվել' տվյալ գենոտիպի կամ գենոտիպերի համակցությունը բնութագրող հատկանիշների արտահայտման աստիճանով»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
8	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ:	Կետում «բույսերի» բառից հետո ավելացնել «նույն տակսոնի» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
9	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մաս:	Մասը տեղափոխել 2-րդ հոդված, որպես 9-րդ մաս:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
10	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածներ:	Նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածներ:ը միավորել մեկ ընդհանուր 3-րդ հոդվածի տակ և հոդվածի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ. «Հոդված 3. Օրենքի կիրառման ոլորտը»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
11	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մաս:	Մասը շարադրել նոր խմբագրությամբ. «1. Սույն օրենքը կարգավորում է բույսերի բոլոր տեսակների և սորտերի պահպանման և օգտագործման գործընթացում ծագած հարաբերությունները»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

12	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասը:	Մասը տեղափոխել 3-րդ հոդվածի 2-րդ մաս:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
13	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 5-րդ-15-րդ հոդվածներ:	Հոդվածները համարակալել համապատասխանաբար 4-րդ-14-րդ:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
14	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նուսխագծի 2-րդ գլուխ:	Գլխի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ. «Բույսերի սորտերի իրավական պահպանության տրամադրման պայմանները և չափանիշները»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
15	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր, 6-րդ հոդվածի 1-ին մաս, 7-րդ հոդվածի 1-ին մաս, 3-րդ գլուխի վերնագիր, 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր, 11-րդ հոդվածի 1-ին մաս, 12-րդ հոդվածի վերնագիր և 1-ին մաս, 13-րդ հոդված, 19-րդ հոդված, 20-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ մասեր, 21-ից 25-րդ հոդվածներ:	Նշվածում «բուծողի իրավունք» բառակապակցությունը փոխարինել «բուծողի իրավունքի արտոնագիր» բառակապակցությամբ:	Չի ընդունվել: UPOV-ի կոնվենցիայի և օրենքի տրամաբանությամբ կարգավորվում է բուծողի իրավունքի հետ կապված հարաբերությունները, այլ ոչ թե նրան տրամադրված արտոնագրի: Նշված հարցը քննարկվել է նաև OPOV-ի կողմից տրամադրված փորձագետների հետ:	Ընդունվել է:
16	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մաս:	Մասը շարադրել նոր խմբագրությամբ. «Բուծողին իրավունքի տրամադրումը չի կարող կախված լինել լրացուցիչ պայմաններից, եթե սորտը բավարարում է սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված չափանիշներին, անվանված է սույն օրենքի 18-րդ հոդվածի պահանջներին համապատասխան անվա-	Չի ընդունվել: Հաշվի առնելով նախորդ առաջարկության վերաբերյալ մեկնաբանությունը՝ ինչպես նաև այն հանգամանքը, որ նախագծով ներկայացված խմբագրությամբ տրված է հարաբերությունների ամբողջական կարգավորումը:	Ընդունվել է:

			նումով և հայտա տուի կողմից պահ-պանվել են սույն օրենքով նախատես-ված ընթացակարգերը և կատարվել են «Պետական տուրքի մասին» Հայաս-տանի Հանրապետության օրենքով սահմանված վճարումները»:		
17	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մաս:	Մասը տեղափոխել 13-րդ հոդվածի 4-րդ մաս:	Չի ընդունվել: Նշված հոդվածները տարբեր հարաբերություններ են կարգավորում:	Ընդունվել է:
18	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մաս:	Մասը շարադրել նոր խմբագրությամբ. «1. Սորտը բավարարում է միատարրության չափանիշին, եթե այդ սորտի բույսերը բավականաչափ միատարր են իրենց հիմնական հատկանիշներով՝ հաշվի առնելով նրա վերարտադրության առանձնահատկությունները»:	Ընդունվել է մասնակի: Կատարվել է համապատասխան խմբագրում:	Ընդունվել է:
19	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մաս:	Մասը տեղափոխել 12-րդ հոդվածի 3-րդ մաս:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
20	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 10-րդ հոդված:	Հոդվածում ավելացնել նոր 2-րդ մաս նոր շարադրությամբ. 2. Հայտը պետք է պարունակի՝ 1) Դիմում 2) Սորտի անուն 3) Սորտի նկարագրություն 4) Սահմանված չափով պետական տուրքի վճարման անդորրագիր»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

21	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 10-րդ հոդված:	Հոդվածում ավելացնել նոր 3-րդ մաս . «3. Հայտի փաստաթղթերի ձևերի նկատմամբ պահանջները սահմանում է լիազոր մարմինը»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
22	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 10-րդ հոդված:	Հոդվածում ավելացնել նոր 4-րդ մաս. «Յուրաքանչյուր սորտի համար լրացվում է նոր հայտ»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
23	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մաս:	Մասը «մեկում» բառից հետո «(առաջին հայտ) պատշաճ կարգով լրացրել է սորտի պահպանման իրավունքների տրամադրման հայտը» բառերը փոխարինել «ներկայացրել է բույսի նոր սորտի պահպանման իրավունքի տրամադրման հայտ,» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
24	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մաս:	Մասում «օրենքի» բառից հետո «5-9-րդ» թվերը փոխարինել «4-8-րդ» թվերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
25	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 14 հոդվածի 1-ին մաս:	Մասում «օրենքի» բառից հետո «15-րդ և 16-րդ» թվերը փոխարինել «14-րդ» թվով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
26	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 14 հոդվածի 4-րդ մասի 1 կետ:	Կետը շարադրել նոր խմբագրությամբ. «1) Որոնք էականորեն ժառանգել են պահպանված սորտի հատկանիշները, եթե պահպանված սորտը ինքը չի հանդիսանում այլ սորտի էական հատկանիշների ժառանգորդ»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

27	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 15-րդ և 16-րդ հոդվածներ:	Հոդվածները միավորել մեկ ընդհանուր. «Հոդված 14. Բուծողի իրավունքի շրջանակները» հոդվածի տակ:	Չի ընդունվել: UPOV-ի կողմից տրամադրված օրենքի մշակման ուղեցույցում և կոնվենցիայում իրավահարաբերությունները կարգավորված են առանձին հոդվածների տեսքով:	Ընդունվել է:
28	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ:	Կետում «14-րդ հոդվածի» բառերը փոխարինել «13-րդ հոդվածի» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
29	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մաս:	Մասում «1» թիվը փոխարինել «2» թվով:	Չի ընդունվել Հոդվածում նման թիվ առկա չէ:	Ընդունվել է:
30	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մաս:	Մասում «2» թիվը փոխարինել «3» թվով:	Չի ընդունվել Հոդվածում նման թիվ առկա չէ:	Ընդունվել է:
31	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մաս:	Մասում «օրենքի» բառից հետո «14-րդ» թիվը փոխարինել «13-րդ» թվով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
32	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 17-րդ, 18-րդ, 19-րդ ...27-րդ հոդվածները համարակալել համապատասխանաբար 15-րդ, 16-րդ, 17-րդ, ...25-րդ:		Չի ընդունվել: Հաշվի առնելով 27-րդ առաջարկության վերաբերյալ մեկնաբանությունը:	Ընդունվել է:

33	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 18-րդ հոդվածի 1-ին մաս:	Մասի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ. « Բուծողի իրավունքը կախված չէ այն միջոցներից, որոնք կարող են կիրառվել տվյալ երկրում սերմանյութի, տնկանյութի արտադրության, հավաստագրման, իրացման կամ այդ նյութերի ներկրումն ու արտահանումը կարգավորելու համար»:	Չի ընդունվել: Չևակերպումը հստակ և ամբողջական չէ:	Ընդունվել է:
34	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 21-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ:	Կետում «օրենքի» բառից հետո «6-րդ կամ 7-րդ» բառերը փոխարինել «5-րդ կամ 6-րդ» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է:
35	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:	Կետում «օրենքի» բառից հետո «8-րդ կամ 9-րդ» բառերը փոխարինել «7-րդ կամ 8-րդ» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է:
36	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 22-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ:	Կետում «օրենքի» բառից հետո «8-րդ կամ 9-րդ» բառերը փոխարինել «7-րդ կամ 8-րդ» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է:
37	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 7-րդ գլուխ:	Գլխի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ. «Եզրափակիչ մաս»:	Չի ընդունվել: Իրավական ակտի տերմինաբանության անհամապատասխանություն կառաջանա, քանի որ օրենքում «մաս» բառը կիրառելի է հոդվածի առանձին դրույթների համար:	Ընդունվել է:
38	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 23-րդ հոդված:	Հոդվածի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ. «Պատասխանատվությունը սույն օրենքը խախտելու դեպքում»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է:

39	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 23-րդ հոդված:	Հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «Սույն օրենքի պահանջների խախտումը հանգեցնում է պատասխանատվության Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:	Չի ընդունվել: Նկատի ունենալով որ օրենքով կարգավորվում է քաղաքացիաիրավական հարաբերություններ, ուստի օրենքի խախտման հետևանքները պետք է կանոնակարգվեն նույն դաշտում:	Ընդունվել է:
40	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 24-րդ հոդված:	Հոդվածի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ. «Պաշտոնական տեղեկությունների հրապարակումը»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է:
41	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 27-րդ հոդված:	Հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. 1) «1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը: 2) Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ կառավարության կողմից սույն օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված որոշումները պետք է ընդունվեն 1 ամսվա ընթացքում»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: Չի ընդունվել: Նման դրույթի սահմանումը նպատակահարմար չէ, հաշվի առնելով, որ օրենքի ընդունումից հետո ՀՀ վարչապետի որոշմամբ հաստատվում է օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը: Իսկ 25-րդ հոդվածով նախատեսված կարգերի ընդունման համար 1 ամսյա ժամկետը ողջամիտ չէ:	Ընդունվել է:
42	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդևան Գրիգորյան	Նախագծի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ:	Կետում «անվան» բառից հետո դնել ստորակետ:	Չի ընդունվել: Նախագծով նշված խմբագրությամբ նպատակ է հետապնդվում սորտն անվանակոչել փորձաքննության արդյունքում:	Ընդունվել է: